

## ԶԵԿՈՅՑՑ ԵՒ ՏԵՂԵԿԱԳԻՐ

**Ա.Մ.Ն. ՄԻԲ.Ս.Զ.Ա.Ն ՊԱՏՐԻԱ.Ր.Բ ՀՕՐ ՈՒՂԵԼՈՐՈՒԹԵԱՆ**

Ի ՍՈՒՐԲ ԷջՄւԱԾԻՆ

ԱՌ ՊԱՏՈՒՄՐԺԱՆ ՑՆՈՐԷՆ ԺՈՂՈՎ

Ա. Ա.Ք.ՈՒ.Ո.Բ.Ս

ԿՐՈՒՍԱՂԵՄ

Պարոք կը զգանք Պատ. ժողովիդ ներկայացնելու հետեւալ զեկոյցը, Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի ընտրութեան առթիւ մեր կատարած պատգամաւորուաթեան չուրջ, տալով ամփոփ տեղեկութիւններ Ազգային-Եկեղեցական ժողովի, Մայր Աթոռի և Հայրենիքի մասին ինչպէս նաև մեր ճամբորութեան երթուղարձր Պարոք Ողջ զգանք արձանագրել նաև մեր անկեղծ երախտագիտութիւնը հանդէպ այս պատուարժան անձրուն և Ազգային Մարմններուն, որոնք աղնուօրէն մեզ ընձեռեցին ամէն միջոց և դիւրութիւն մինչև անգամ բացառիկ աշակցութիւն, մեր ճամբորութիւնը հանգիստ և պահով գարնելու համար:

Առաջին առթիւ մեր երախտագիտութիւնը կը յայտնինք Պաղեստինի Վահմ. Բարձր Գոմիքը ին Մարաջախտ Դերկոմն Կօրիթին, որ բարեհաճութիւնը ունեցաւ մեզ տրամադրելու (Պաղեստինէն՝ Պարսկաստան) օգային ճամբորութեան միջնորդներուն լաւագոյնը, բացառիկ դիւրութիւններով միասին: Նորին Վահեմութեան այս վեհանձն վիհարերմունքը: որ ուրիշ առիթներով ալ յայտնաբերուած էր, մեր, ինչպէս նաև Կիլիկիոյ Կաթողիկոսի միջուկին հանդէպ, յանձնեցինք Վեհափառ Կաթողիկոսի բարձր ուշագրութեան և նորին Վեհափառութիւնը զայն մեծապէս գնահատելով մեր միջոցաւ Նորին Վահեմութեան զրկեցիր Հայրապետական գրնութիւնները: Ծնորհակալութեան պարտք ունինք նաև Երասաղէմիր Վահմ. Կառավարին Մր. Բոլլոքին, մեր ճամբորութեան վիհարեցեալ դիւրութեանց կարգադրութիւններու նկատմամբ իր ցոյց տուած աղնիս և բարեացակամ ուշագրութեանը համար:

Մայիս 31-ի առաւտառուն, Պատուարժան Միաբանութեան ճողեշնորհ անդամներուն հրաժեշտ տալէ յետոյ, Ա. Բաղաքէս մեկնեցանք դէպի Լիդորայի օդակայանը, ուր պահմը հանգստանալէ յետոյ, բաժնուեցանք ողջերթի հեկած Հոգեշնորհ Հայրերէն և ուղղուեցանք դէպի մեր օդանաւոր: Տեղաւորուելէ յետոյ, ժամը 10.30-ին մեկնեցանք դէպի Միջագետք և հէսօրէն քիչ զերջ իջանք Հապանիայի օդակայանին մէջ: Ժամը 2.30-ին շարունակեցինք մեր թուիքք դէպի Թէկրան ուր հասանք 5.30-ին: Ճամբորութիւնը անապատային և լինային շրջաններու տաք և պաղ գոտիներու մէջէն, տասը հազար ոտք բարձրութեան վրայ և երկու հարկեր մղոն արագութեամբ, անցաւ հանգիստ ու անվտանգ: Թէկրանի օդակայանին մէջ մեզի դիմաւորեց իրանա-Հնդկաստանի թեմի Առաջնորդ Գեր. Վահան Մ. Վրդ. Կոստանեան, հետք ունենալով Բահանայական դասէն Տ. Յովհաննէս Խաչ. Քնչյ. Հանեան և Թէկրանի Առաջամայ Թեմական Խորհուրդէն մի քանի ներկայացուցիչներ և այլ պատուարժան ազգայիններ, բարեկամներ և ծանօթներ ։ Գերապատի Առաջնորդը յանուն իրանա-Հնդկաստանի Հայութեան մեզի ողջունեց՝ չերմագին բարեմաղթութիւններով, որոնց ի պատասխան յայտնեցինք մեր շնոր-

հակալութիւնը, յանուն Ս. Աթոռոյ և Պատ. Միարանութեան: Օղակայանէն Եկեղեցի առաջնորդութեանք և ընդունուեցանք և Հրաշափառուով ի ներկայութեան հաւատացեալներու մեծ բազմութեան, որոնց տուինք մեր օրինութիւնները: Յաջորդ չորս օրերու ընթացքին փոխագարծ այցելութիւններ տուինք պաշտօնական անձերու և այցելեցինք Բրիտանական և Խորհրդային Վահմ. Մինիստրներուն և իրանի անցագրային պաշտօնաւարձներու՝ մեր ճամբրութեան կապակցութեամբ: Մասնաւոր հանուքով կը յիշատաւ կենք նաև մեր արդինաւոր տեսակցութիւնը Թէկրանաբնակ ազգային մեծ բարերար Պ. Ռոման Սայեանի հետ, իր կառուցած Եկեղեցւոյ օժման և բացման հարցի մասին: Օգոտելով իր ազնիւ զգացումներին, մեր Կողմէ ևս պարտք նկատեցինք յատկապւ չեւտելու Եկեղեցւոյ կարևորութիւնն ու անհրաժեշտութիւնը՝ Թէկրանաբնակ մերազնէից հոգեոր և կրօնական կենաքի համար: Այս ուղղութեամբ մեր ներկայացուցած բարի և պատուարեր թելազրութիւնները շուտով տեղ գտան իր մեծ սրտին և համազումներուն մէջ, և վեհանձնօրէն խոստացաւ ամէն զնով լրացնել տաք Եկեղեցւոյ ներքին թերաւարտ մասին և յարդարանքը՝ մինչև Կիրիկոյ Վեհ. Հայրապետի և մեր վերադարձը Ս. Էջմիածնէն իրանաւ-Հնդկաստանի Թեմակալ Առաջնորդին հետ միասն երր լսու մեր խոստաման Երշանիկ պատեհութիւնը պիտի ընծայուէր իրեն աննախընթաց հանդիսութեամբ և շքեղութեամբ պահուած տեսնելու իր Աստուածականոյ և ազգանըլէր մեծ զոհաբերութիւնը, ի յաւերդական յիշատակ իր և իր հանգուցեալ մօր Զարգարդի և ի հոգեոր միմիթարութիւն Թէկրանաբնակ 30.000 ջերմեռանդ և պատուական Հայութեան:

Ցուիսի Յ-ին Կիրակի օր, Տօն Ս. Էջմիածնի ըստ նոր Տոմարի, ներկայ գտուեացանք Ս. Պատարագին որ կը մասուցուէր Ազգային Վարժարանի մասուուի վերածուած սրահին մէջ: Պատարագէն վերջ Հայրապետական Մալթանք կատարուեցաւ Վարժարանի բաշին մէջ, հոծ բազմութեան մը ներկայութեան: Երեկոյեան Թէկրանի առժամեայ Թեմական Խորհրդի հրաւերով մասնակցեցանք Իրանաւ-Հնդկաստանի Թեմի Գերապատիւ Առաջնորդին ի պատիւ սարքուած թէյասեղանին: Ներկայ էին նաև նզիպատուի Առաջնորդ Գեր. Տ. Մամբէր Եպո. Սիրունեան, Վահմ. Ճանիկ Զագըր և իր Ազն. Տիկինը, Պ. Էօժէն Փափաղեան և ութսունի չափ Թէկրանաբնակ ազգայիններ: Հաւաքրոյթի բացման խօսքին յաջորդեցին մի քանի սրտարուի ճառեր, և ներկաները լաւազոյն զգացումներով համակուած յուշնկայ իրենց երախտազիտութիւնը յայտնեցն իրանի Վեհափառ Շահնշահին, իրանահայութեան հանդէպ իր ցոյց տուած հայրախմամ հոգածութեանը համար:

Ցուիսի Ծ-ին, Սրբ Քշարիթի որ յետ միջօրէի ժամը 1-ին, Եղիպատոսի պատգամաւուարութեան և Իրանաւ-Հնդկաստանի Առաջնորդին հետ Թէկրանի Սովետական օդակայանէն Դաւրէժ մեկնացնք՝ Սովետական օդանաուով: Նոյն օդակայանէն մի քանի օր առաջ մեկնած էին Անգղիոյ Երկու պատգամաւուները՝ Տիքր Սարիս Քիւրքնեան և Տքթ. Տիգրան Խեթիւնեան: Հոս ուրախութեամբ կը իշենք մեր ունեցած չնորհապար զգացումները հանդէպէ մեզի ցոյց տուած բացառիկ ազնուութեանց համար, թէ անցագրատան մէջ և թէ Օդակայանի կարգադրութեանց պարզապին:

Դաւրէժի Սովետական օդակայանը հասանք ժամը 3.15-ին և ինքնաշարժով առաջնորդուեցանք Ս. Աստուածածնայ Եկեղեցին ուր Ալտրպատականի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Ներսէս Արքեպոս. Մելիքթանգեան, ի գլուխ Դաւրէժի Բահանայական գասուն, մեղ ընգունեց և Հրաշափառուով, ի ներկայութեան Դաւրէժակայ խուռներամ բազմութեան: Պաշտամունքէն վերջ, պատգամաւոր Եկեղեցեականներս խորապէս զգածուած ժողովորդի խանդավառ վերաբերմունքէն, յաջորդաբար խօսեցանք մեր առաքելութեան շուրջ, տալով անոնց շահնեկան տեղեկութիւններ Մերձաւոր Արևելքի Հայութեան Ազգային և Եկեղեցեական կեանքի մասին:

Եկեղեցին զացինք Առաջնորդաբար, ուր երեք օր ամբողջ, զայելեցինք Գերաշնորհ Առաջնորդի սիրազեղ հիրազեղ Սիրաբնկալութիւնը: Նորին Սրբազնութեանը հետ այցելեցինք Ս. Սարգս Եկեղեցին, Հայկաղեան, Թամարեան Վարժարանի ուր կը յանաւ:

ինն աւելի քան 800 աշակերտներ, Մարալանի հնագարեան Ա. Աստուածածնայ Եկեղեցին և Ազգային ընդարձակ գերեզմանատունը, ուր կը գտնուի Ս. Շողակաթ Եկեղեցին, 1940-ին կառուցուած, Ֆրար Սիմոն Մանուչարեանի ժախչով:

Այս պտոյտներու ժամանակ առիթ ունեցանք լիկու և տեսնելու Ասորպատականի բազմամեջ Առաջնորդդի անխոնդ աշխատանքի ապացոյցները, Առաջնորդարանին մէջ ծանօթացանք Իրանահայոց գրական մշակ և բանասէր Պ. Հայկ Անձմեանի հետ իր լոյս ընծայած գրական աշխատանքներուն վրայ աւելցուցած է նորերը որոնք պատրաստ են ապագրութեան համար: Ասոնց մէջ շահնեկան են հետեւաները, Պատմութիւն նոր Զուղայի, Ցուցակ Ձեռալրություն Դաւթէծի, Խաների կենապետինը, Անաւանի կենապետին կենապետինը, Անեւելանայ եւ Անեւմածի գրական վերածնունդը: Հաւաքած ունի նաեւ Հոյ-Ասորպատականի պատութեան և բանասիրութեան վերաբերեալ բազմաթիւ յիշատակարաններ և արձանագրութիւններ:

Ցունիր 7-ին Հինգչարքի՝ գիշերուան ժամը 8.30-ին, բաժնուեցանք Առաջնորդ Արրազանէն յարգանքի և երախտազիտական խորունկ զգացումներով և մեկնեցանք երկաթաղի կայարանը, մեղի հետ տանելով Ասորպատականի թեմի պատգամաւորները Տ. Կարապետ Քնչյ. Մանուկիան և Պ. Բագարաս Ղորովզիան: Կայարանի մէջ գտնանք ողջերթի եկած մեծ բազմութիւն մը, Դաւթէժահայոց յատուկ ոգերութեամբ բռնկած: Բւղեցին որ պատգամաւորները ամի բան ասեն իրանց և ոչ ոք կրցաւ չտաել այդ սրանց, որ պահանջն էր իրենց քրիստոնէական հաւատաքին և սիրոյն:

Ժամը 10.30-ին Դաւթէծի կայարանէն մէկնեցանք գէպի Խուրֆա, Ամբողջ գիշեր համբորդեցինք գտնդադ գնացքով, կայարաններու մէջ երկար սպասելով: Առաւօտուն համարանք Իրանեան Ջուլֆայի կայարանը: Հան հանդիպեցանք Դաւթէժցի մի քանի ազգայիններու, որոնք ուխտի գացած էին Ս. Մտեփանոս Նախավկայի վանքը և վերաբերած՝ պատգամաւորները դիմաւորելու համար: Անոնց միացան ուրիշ ուխտաւորներու որոնք Դաւթէժն, մեր գնացքով հոն հասած էին: Ուխտաւորներու երկու խումբերը կայարանի պատգաման սենեկի մէջ պատգամաւորներուն նախաճաշ մէջ արեցին: Ձերմենանք ուխտաւորներու արտասութեալ բաղձանքները մեր սրտին, նոյն գնացքով, Արքաքի աջ ափէն անցանք ձախ ափէ՝ երկաթեայ կամուրջէն, և ժամը 7.30-ին մտանք Սովետական Ջուլֆան: Քաղաքը կը տեսնուէր հեռաւն իսկ՝ առոր ետև Դարաշամբի լեռները, որոնց մէջ կը գտնուի Ս. Մտեփանոսի վանքը, իր տառը տնուոր ժողովրդով: Վանքին այժմեան վանահայը է Տ. Թորգոմ Վրդը, ձեռնազբուած և հոն զրկուած Գեր. Մելիքթանգեան Սրբազանի կողմէ: Գնացքը կանգ առաւ քաղաքի կայարանին առջև և Պատգամաւորներու դիմաւորցին երեանի ինքուրիստ պանդոկի երկու պաշտոնեաները, գլխաւորութեամբ Պ. Մուշեղ Սարգսեանի, և առաջնորդելին կայարանի հրանեակը, ուր մեղ կը պատար Հայուսաւանեան բարիքներով զարդարուած սեղան մը: Գոհանակութեամբ ճաշակեցինք բոլորէն ալ և լեցուեցանք իրն Խսրայէլ Աւետեաց երկու պատգամաւորներու երեակալութիւններով և ակնկալութիւններով: Համեզ էին մանաւանք մեր հիւրընկաներու զդացնմենքուն կաթն ու մեղը: Անուշ պատւորութիւններու բաժնուեցանք ափերանեակներ, կայարանի ազգարար զանգի հրաւերին վրայ և ակնկալուեցանք առլունապարզ այս կառաչարին մէջ՝ որ երեանէն յատկապէս բերուած էր պատգամաւորներու համար: Ժամը 8.30-ին մեկնեցանք Ջուլֆայէն, Մայր Արքաքի ափերով. թէն ձախն ի վեր, սակայն աշը մեր աչքերէն միշտ անբաժան: Աօր հըրգաւոր լուրիքն մը կը տիրեր երկու ափերուն վրայ ուլ: Ոչ մէկ ձայն կը լսուէր Արքաքէն, որ կը առէկը լուս ու մունչ իր հուսնին մէջ խորասոյզ: Ջուլֆայէցնոց Via dolorozatէն կ'անցնէինք, Հայութեան հազարաւոր Փողգոթալի ճանապարհներէն մին: Քիչ վերջ տեսանք Ջուլֆայի կամուրջի սիւներուն մնացողները — զոյզ մը Հօրերերուն մէջ և զոյզ մըն ալ ձախ ափին, յետոյ կին գերեզման աջ ափին, զոյզ մը Հօրերերուն մէջ և զոյզ մըն ալ ձախ ափին, յետոյ կին գերեզման ատառնը — խաչ քարերու անտառակ մը սարի փեշին: Անցանք Կարմիր վանքէն, որ նատած էր կիսաւեր մեր աջ կողմէ բարձունքին վրայ: Կանգուն էին պարիսպներու մեծ մասը և կը տեսնուէր զերեզմանատունը: Հեռուն տեսանք նաև երկորդ համանուն

վաճառք գաշտի միջին։ Հասանք Թազա գիւղ եւ Նախիջեւան՝ մշտկուած արտերու եւ ժառառուաններու մէջ սրբուն։ Նորաշնչնեն վերջ անցանք Նախիջեւանի Հանրապետութեան և Ներքայ Հայաստանի սահմանը և մտանք Արարատեան դաշտը։ Հեռուն՝ մշուշի և ամփերու մէջ կը նշմարուէին Հայոց լեռներու երկու հակաները։ Որչափ կը յառաջնար միջ զնացքը, այնչափ աւելի կը ընդարձակուէր կանաչութիւնը, այնչափ աւելի կը բազմանային կրտսապ ոչխատանքի ապացոյցները։ Մեծ ու փոքր գործարանային չէնքիր՝ երկաթուղիի ուղղութեամբ, անոնց քովերը բազմայարկ բնակարաններ՝ ծառաւտաններով շրջապատուած, ջրանցքներ ու առուներ մինչև Կորիզոնին ծայրերը, հազարաւոր ոչխարներ ու արջառներ ջուրերուն քով, բարձունքներու վրայ, արտերուն մէջ։ Կայարաններուն մէջ հանդիպացանք հայ շինականներու իրենց վառվուն բալիկներով շրջապատուած, «Օրնեա ի Տէր», «Աստուած օրնէ» կը լուսէր կառաջարի երկու կողմերէն։ Փոքրիկները ծաղկեփունջ կ'երկնցներն, մեծերը գլխարկ վերցնելով կը խաչակինքէին ոիմ պապս էլ մղի էր ըսին շատեր ցոյց տալով իրենց պապերուն հաւատքին չերմեռաններութիւնը։

Ցունիս 8-ին Աւրարթ օր ժամը 5.30-ին հասանք Երևանի կայարանը։ Դիմաւորելու եկած էին 8. Տ. ներսէս, Կարապետ և Խորէն Վարդապետները, Բրօֆ. Աշոտ Սրբահամեան և ուրիշներ։ Կառաջարէն իջնալու ատեն, և անկէ վերջ, մինչև կայարանի հրապարակը, մի քանի անգամ լուսանկարուեցանք Երևանի կոնժի կողմէ, կաթողիկոսական ընտրութեան առթիւ կազմուելիք շարժապատկերի ժապաւէնի համար։

Կայարանի հրապարակին մէջ հաւաքուտօծ գտանք չէնչող, կայտառ ու հիտաքրիլ բազմութիւն մը Անոնց երկար շարքերու առջև մինչև հրապարակի մուտքը՝ աւքի կը զարնէր սոսիկաններու շղթան — ճերմակ գլխարիով ու բաճկոնով, և առափառով ու մոյկերով։ Անոնց աղջեւէն անցանք ինքաշարժով ողջունելով բոլորին։ Կայարանի հրապարակէն ելանք դէպի Շահումեան հրապարակը և անկէ՝ Արովեան փողոցի մէջէն, գէպի Խնմուրիստ պանդոկը, որ կը գտնուի Արովեան հրապարակի և փողոցի անկիւնին վրայ։ Հրապարակի մէջ և պանզոկի մոււթին առջև գտանք Երևանցինքներու բազմութիւն մը՝ որ Երևան կը բերէր նոյնչափ տաք վերաբերմունք։ Պանդոկին առջև ընդունուեցանք Կառավարչին կողմէ և առաջնորդուեցանք հիւրասրան։ ուր յայտնեցնեանք մէր շնորհակալութիւնն ու գնահատութիւնը մեզ զիմաւորով Պետ. Պաշտօնատարներուն և հոգենորկ եկեղեցականներուն և ազգայիններուն, ապա անցանք մէր սենեանները։ Ըստ Կառավարչի ազդարարութեան, Ամեն. Տնշակալի կարգադրութեան համաձայն եկեղեցականներ պիտի հրւընկալուէինք Ա. Էջմիածնի Վանքին մէջ, իսկ աշխարհականները Խնմուրիստ և Սևան պանդոկներուն մէջ։ Պանզոկ մասինք մինչև Կիրակի առաօտու 1941-ի հանոնաւորութեան և մաքրութեան մէջ տեսանք բոլոր յորբարձմններով։ Եէնքը ընդհանուր նորոգութիւն ունեցած էր իր բոլոր մտուրով և կանկարասիններով։ Տաշարանին մեծ սրաց յատկացւած էր պատգամաւորներուն և սեղաններու լիութիւնն անհատ և աննուեր երբեակ ճաշերուն ար. 1941-ի մեջի ծանօթ պաշտօնեաններէն շատերը իրենց նախիլն պարագանաւթեանց մէջ էին, ու չափազանց ուրամ էին որ այս անկամ իրենց հաստատութեան տարեգութեան մէջ պիտի կրնային արձանագրել յաջող ընտրութեան մը պատգամաւորութեան հիւրընկալութիւնը։

Ցաջորդ օրը, կէսօրէ առաջ, այցելեցինք մտսակայ Աղջկանց Միջնակարգ վարժարանը և Պատմական Թանգարանը։ Տեսչուեկին անձամբ ընդունեց մեզ։ Իր առաջնորդութեամբ տեսանք չէնքիր բոլոր բաժանումները և գիտակն զասերու սրաները, հիւնալով մանաւանդ վերջիններու ճոխ բովանդակութեանը վրայ։ Գիտութեան սրաներին միոյն մէջ Ազն. Տեսչուեկին պատգամաւորներու քննութեան յանձնեց բարձրագոյն գառարաններու աշակերտուկներու շարադրութեան և թէզերու տեսրակները գանագանիթերու շուրջ։ Պատգամաւորներէն ոմանք արտասահմանի հայ կրթական հաստատութեանց մէջ ուսուցիչ և տեսուչ ելած էին, ոմանք հոգարձու և Առաջնորդ, և Տեսչուեկին կրցաւ ունենալ ձեռնահաս անձերու բարձր գնահատութիւնը իր սահմանակներու շարադրելու և տրամաբանելու կարողութեան ինչպէս նաև անոնց առողջ գատողու-

թեան մասին։ Աժառնային արձակութքի պատճառաւ աշակերտութիւնը կը բացակայէր, բայց մօտերը բնակող սանուէիներ լսելով պատգամաւորներու այցելութեան մասին՝ վարժարան փոխացած էին։ Տեսչուէին որ հպատութեամբ խօսած էր անոնց աշխատութեան և յառաջդիմութեան մասին, պատգամաւորներու փափաքին զրայ, մի քանի քերթուածներ արտասանել տուաւ, մեծ խանդավառութիւն և հոգեկան մսիթարութիւն պատճառակելով ներկաներուն։

Հնագիտական թանգարանը երեանի ամենամեծ պարծանքներէն մին է, իրբե հայ քաղաքակրթութեան և անցեալ փառքի ամենահարուստ գանձարաններէն։ Թողոր արժէքաւոր և ուսումնասիրուած հնութիւնները զիտական կարգաւորութեամբ զասաւորուած են լուսաւոր և օգասուն սրահներու մէջ։ Նախապատմական գորերու առարկաներուն մէջ կը գտնուին վերջին պեղումներուն արգիւնքները՝ խեցեղէն և մետաղեայ ամաներ և գործիքներ նախա-մերարտեան և Ուրարտեան շրջաններէն։ Մեծ աեղ կը գրաւեն Հայաստանի սեպագիր արձանագրութիւնները, որոնցմէ ոմանք գեռ ուսումնասիրութեան տակ են։ Նախաքրիստոնէական պատմական շրջաններու կարեր նիթիթիրուն կը յաջորդեն Քրիստոնէական դարերու հարտարարուեստի, քանզակագործութեան, խաչքարերու, փայտագործութեան, ոսկերչութեան, ասեղնագործութեան, գորգագործութեան, նկարչութեան ճոխ հաւաքածները։ Հարուստ են նաև հայկական գրամեներու պահարանները։ Թանգարանը ունի նկարչական, գեղարվեստի յատկացաւած ընդարձակ սրահներ, ուր կը տեսնուին հայ եւ տար նկարչութեան գլուխ-գործոցներ՝ փառահեղ շրջանակներու մէջ։ Ունի նաև լուսանկարչական բաժին, ուր կը պահուին ոչ միայն թանգարանի մէջ գտնուած առարկաներու լուսանկարները եւ անոնց ապակինները, այլ եւ լուսանկարները հայկական հնագիտութեան եւ ազգագրութեան վերաբերեալ բոլոր ժանօթ նիթերու։ Հաստատութեան մէջ կայ նաև Հնագիտական Մատենադարան մը 20.000 հազորագիւտ հաստորներով։

Ցոււիս 10-ին կիրակի առաւօտ ժամը 10-ին եզիպտոսի, Իրանի, Ռումանիոյ և Պուլկարիոյ հոգեւորական և աշխարհական պատգամաւորներու հետ, ինքնաշարժով մեկնեցանք գէպի Ս. էջմիածին։ Անցանք Արովին փողոցէն, բազմայարկ գեղեցիկ շէնքերու առջեէն և յաջորդաբար լէնինեան և Շաումեան հրապարակներու մէջէն, Կոմունարներու հանրային պարտզի, Ս. Մարգիր Եկեղեցոյ, Արարատ Քրիստ Թրասի առջեէն և Զանզուի կամուրջը կտրելով մտանք էջմիածին լայն խճուզին որ քսան և կինդ քիլոմետր երկարութեամբ մեզի պիտի հասցնէր Գէրգեան Ճեմարանի առջեւ։

Անցանք Դալմայի այգիներու գեղեցիկ ծառուզիներու մէջէն, Փարաքար զիւղի և անոր քովի ընդարձակ պաղաստաններէն, մինչև Վաղարշապատի մօտերը ուր խճուզիին ձախ կողմին զրայ նշամբայինք Ջուարթնոց տաճարի աւերակները, գեղեցիկ ծառուզիի մը ծայրին փռուած։ Թիւ յետոյ աղ կողմին զրայ բարձրակառոյց հրապարակի մը զրայ բազմած տեսանք Ս. Հոփիսիմէ կոյսին նույին կոյմին զմայելի տաճարը — ձուլուած թափուած արձանի մը նման —, անոր ետևէն նոյն կոյմին զրայ խճուզիէն քիչ հեռու Ս. Շողակաթի, յետոյ Ս. Գայիսիէ տաճարները և վերջապէս Ս. էջմիածնի վերուլցիկ կաթուզիէն՝ ծառերու կանաչներուն մէջ շողչոզուն։ Մեր թափորը կանք առաջ Գէորգեան Ճեմարանի պարուզին եւ ծառաստանին քով։ Ճեմարանի մուտքին՝ բոլորիս ուշադրութիւնը դրաւեցին Գամառ-Թաթիպայի արձանի (կիսանդրի) առջեւ բոլորուած հայ, ուռաւ և տար զինուորները՝ իրենց ապացնարանի ճերմակ համազգեստներով։ Առաջին անգամն էր որ կը տեսնէինք կարմիր բանակի ճերմակազգեստ յաղթապանծ քաջերը։ մօտեցան մեզի և ողջաւնեցինք ջերմ զդացութերով։

Ս. էջմիածնի Վանքի պարսպի արևելեան մուտքէն ներս մտանք և կարգաւ յառաջացանք գէպի Մայր Ճաճար Ս. Պատարագի արարոցութիւնը նոր սկսած էր։ Եկեղեցականներս ներս մտանք փիլոնազգեստ և Ս. էջման Սեղանին առջեւ ծունկի գալով աղօթեցինք, ապա առաջնորդուեցանք և Աւագ Դասը, ուր կը գտնուէր Ամենապատի Տեղակալ Մըրազանը կաթ։ Գահին քով, իր Աթոռին առջեւ։ Նորին Ամենապատուութեան պաշտամ մնական պատճառակելով անցանք մեր տեղերը։ Ս. Պատարագը կը մատուցուէր Աւագ Սեղարդանք ընծայելով անցանք մեր տեղերը։

շանին վրայ և ժամարարն էր Հոգ։ Տ. Ներսէս Վրդ։ Արքահամեան։ Դպիրներու երգեցողութիւնը կը կատարէր։ Տէր Նեփոլի խումբը։ Մ. Պատարացի աւարտումէն յետոյ Ամենապատի Տեղակալ Արքազանի հետ եղանք Վեհարան՝ վիլնազգեստ միարան վարդապետներու առաջնորդութեամբ։ Հոն, Նորին Ամենապատուութեան մատուցինք Երուառաջէմի Ս. Աթոռոյ և Արցոց Յակոբեանց Միարանութեան հաւատարմական յարգանքն ու սէրը։ Նորին Ամենապատուութիւնը պատգամաւորներու ուղերձները ունկնդրելէ յետոյ, զգածուած սրտոյ ողջունեց բոյորիս, գնահատելով մէր զգացումները։ Այս առթիւ յատկապէս չնորհաւորհցինք Նորին Ամենապատուութիւնը իր ստացած պետական շքանշանին համար։

Աշխարհական պատգամաւորները Երեան վերագարձան, իսկ հոգերուականներս տեղաւորուեցանք Վեհարանի հիւսխային և Կարաւային կողմերուն կից յարկաբաժններուն մէջ՝ Զազարտպատ կոչուած, և Տրդատայ գուռէն վար Սպիսկոպոսաց հին թաղին մէջ։ Յետ միջօրէի ժամը 3-ին ճաշեցինք Վեհարանի փոքրիկ սրահին մէջ։ Կը նախազահէր Անն։ Տեղակալ Մրրազանը, Ներկայ էին մեր հետ ժամանած հոգերուականները եւ Ա. Էջմիածնի բոլոր վարդապետները և քահանաները։ Ժամը 5-ին Ժամանեց Կիլիկիոյ Վեհ։ Հայրապետը իր հատերդներով։ «Հրաշափառ» ով ընդունեցաւ Մայր Տաճար և Խջման Սեղանին աստիճաններէն խօսեցաւ Վաղարշապատցի հաւատացեալներուն, որնք միայն զանգախներու աղդաբարութեան վրայ Կրցած էին այնչափ շուտ խնդրուի Տաճարին մէջ, ընդունելու համար Տաճան Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետի օրհնութիւնն ու պատգամը։ «Հրաշափառ» էն վերջ, Վեհափառը առաջնորդուեցաւ Վեհարան, ուր, առաջին անգամ հանդիսատես եղանք 1441-էն իւ վեր սպասուած հրաշալիք գէպէի մը — Մայր Աթոռի և Կիլիկիոյ Աթոռու ողջագուրանքին էջմիածնի մէջ։ Հայատանեայց Եկեղեցւոյ տարեգորութեան մէջ պատմական և նշանակալից գէպէ մըն էր տեղի ունեցածը։ Խոչ որ աթոռզ սերունդներ, նոյնիսկ բռուն պայքարներով չէին կրցած ընել կամ թոյլ տուած չէին որ Կարենան ընել, Ամենակարողը իր նախախնամութեամբ քրիստոնէական սիրոյ ճամփոյ, հոգիններու ճամփոյ և հոգերու եղանակաւ կիրագործէր էր խաղաղութեամբ, հոգերու միմիթարութիւն պարզեելով բգկուուած Հայութեան։

Նոյն օրը, ընթիրքին, առիթ ընծայուեցան Ներկաններուն Ազգային-Եկեղեցական Փողովի այդ տուաջին աննախընթացին անդրագառնալու։ Մայր Աթոռոյ Ազգընամիր Ամենապատի Տեղակալ Մրրազանէն սկսեալ Երուսալէմի Առաք։ Աթոռի, Եղիպատոսի, Իրանա-Հնդկաստանի, Ատրպատականի, Արքարատեան, Կովկասներու, Եւրոպային Առաջնորդական Թեմերու հոգեկոր ներկայացուցիչները իրենց լիասիրտ զրուատիքը նուիրեցին Տաճան Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետին, վեր առնելով Հայատանեայց Եկեղեցւոյ միանականութեան հրամական սկզբունքը, և, Աւետարանի սիրոյ և եղբայրութեան գաղափարականութիւնը։ Վեհարանը Վեհերնատան լոյսերու մէջ կը շողար այդ զիշեր, և ներկանները մեկնեցան հոգերուապէս լիացած և մեծ յոյսերով խանգալաւ։

Ա. էջմիածնի Վանքի Միարանութեան հոգերուական անդամներէն ներկայ էին հետեւանները, Տ. Մատթէէոս Վրդ։ Աճէմեան, Տ. Ներսէս Վրդ։ Ամբրահամեան, Տ. Կառապետ Վրդ։ Թումայեան, Տ. Սուորէն Վրդ։ Թորոսեան, Տ. Ներսէս Վրդ։ Թովկաննէտեան, Տ. Եղանիկ Վրդ։ Ազնաւուրեան, Տ. Թուրէն Վրդ։ Իրամբեան, Տ. Վահան Ծ, Վրդ։ Կոստաննէան (Իրանա-Հնդկաստանի Թեմեր Առաջնորդ), Տ. Աթոքէն Վրդ։ Էլոււմեան և Տ. Եղիչէ Վրդ։ Յարութիւննեան Ներկայ էին նաև Ա. էջմիածնայ Տաճարին մէջ պաշտոնավորը։ Տ. Նիկոլ Աւետ Քնչյ, Գաէէեան և Տ. Խորէն Քնչյ։ Շուշանեան։

Յաջորդ երկու օրերու ընթացքին այցելեցինք Ա. էջմիածնի պարիսպներէն ներս ու գուրս գունուած չենքերն ու հետաքրքրական վայրերը, մանրամասնութեամբ տեսնելու նպատակնդ, Մայր Տաճարը, Վեհարանը, վանքի միարանական թաղերը և թանգարանը, խորհրդարանը, մատենագարանը, տպարանը, Գէորգէան Շեմմարանը, դիտարանը, նոր Վեհարանը, վանքին հիւրանոցը, Ներսէսեան լիճը և անտառը։ (1)